ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ. Թումանյանական աշխարհ. մշակութային գիտարան, *Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016, 852 էջ:*

Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակին ընդառաջ հայ ընթերցողի սեղանին դրվեց ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ճարտարապետության դոկտոր Գառնիկ Շախկյանի «Թումանյանական աշխարհ. մշակութային գիտարան» ստվարածավալ աշխատությունը: Հանրագիտարանները ստվորաբար հեղինակային կոլեկտիվների տարիների տքնաջան աշխատանքի արդյունք են, մինչդեռ այս աշխատությունը ոչ թե հեղինակների խմբի, այլ մեկ անհատի ստեղծած հանրագիտարան է, որը զգալի չափով հարստացնում է հայ բազմադարյան մշակույթի ստեղծագործական շտեմարանը: Մեկ անհատի կողմից այսպիսի վիթխարի աշխատանքը զարմանալի կլիներ, եթե խոսքը չվերաբերեր Գ. Շախկյանին, ով հայ մշակույթի բազմատաղանդ նվիրյալներից է, արվեստի, հայրենագիտության, բանասիրության, թումանյանագիտական մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների, ճարտարապետական բազմաթիվ նախագծերի հեղինակ:

Հայրենի եզերքի կարոտն ու հարազատ բնաշխարհը մշտապես ոգեշնչել ու հուզել են հեղինակին, բազմիցս տարել նրան Լոռու պատմության ու մշակույթի ուսումնասիրության ոլորտ: Տարածքային այս հանրագիտարանը հեղինակի տասնյակ տարիների ստեղծագործական բեղուն աշխատանքի արդյունքն է: Մինչ հիմնարար այս աշխատության ստեղծումը Շախկյանը քայլ առ քայլ՝ Օձունին նվիրված և շուրջ երկու տասնյակ այլ աշխատություններով («Լոռի, պատմության քարակերտ էջեր», «Շնող» հայրենագիտական պրակները, «Գույն, ոգի, կերպար», «Պատկերազարդ կենսագրական հայրենագիտարան» և այլն) նախապատրաստել էր այս հանրագիտարանի ստեղծումը: Նա իր յուրաքանչյուր ուսումնասիրության մեջ ներկայացնում է Լոռու մշակութային պատմությունը: Եվ այս ամենի հանրագումարը եղավ «Թումանյանական աշխարհ. մշակութային գիտարան» պատկերազարդ հանրագիտարանը:

Հեղինակի համար հետազոտության աղբյուր են հանդիսացել հանրագիտական-տեղեկատվական, հուշագրական, ուսումնագիտական, հայրենագիտական

և այլ գրականություն, համակարգչային կայքեր, արխիվային, թանգարանային նյութեր, գիտական հանդեսներ, պարբերականներ և այլն:

Գ. Շախկյանը պահպանել է ժամանակակից հանրագիտարանին ներկայացվող բոլոր պահանջները՝ նոր մոտեցումներով, որոնց շնորհիվ ստեղծվել է ժամանակակից պատկերազարդ նորատիպ հանրագիտարան: Անձնանունների ընտրությունը կատարելիս և բառահոդվածների ծավալը որոշելիս հաշվի է առնվել «անձի վաստակը, ներդրումը, բարձր դրսևորումները կենսագործունեության տարբեր ոլորտներում, հասարակական-մշակութային կյանքում, գիտության, գրականության, մշակույթի, սպորտի և այլ բնագավառներում ճանաչումը» (էջ 4), նրանց ստացած կոչումներն ու պարգևները, մրցանակները և այլն: Կարևորվել է նաև յուրաքանչյուրի ձեռքբերումների արդյունքների արդիականությունն ու հեռանկարայնությունը: Թեև Գ. Շախկյանը խոստովանում է՝ պայմանավորված նոր ժամանակների չափումներով ու գնահատականների փոփոխությամբ՝ միշտ չէ, որ անձնանուններին վերաբերող բառահոդվածների ծավալը պայմանավորված է անձի գործերով ու արժանիքներով:

Հեղինակը բարեխղճորեն ուսումնասիրել և հավուր պատշաճի ներկայացրել է գիտարանում տեղ գտած մշակութային յուրաքանչյուր գործչի միջավայրը՝ ներառելով նրանց մասին անվանի մարդկանց բնորոշումները, որոնք առավել ամբողջական են դարձնում գործչի դերը հայ մշակույթի պատմության մեջ:

Թեև հանրագիտարանը տարածքային է, սակայն հատորում տեղ են գտել այն ոչ-լոռեցիները, ովքեր իրենց գործունեության ոլորտ դարձրել են Լոռին ու լոռեցիներին և «նպաստել են բնաշխարհին, երկրին» (էջ 5): Այս իմաստով Գ. Շախկյանը նույնպես դրսևորել է իր նվիրվածությունը թումանյանական աշխարհին, արտահայտել իր երախտագիտությունը՝ «պատվավոր լոռեցի» դարձնելով նրանց, ովքեր իրենց աշխատություններով ու նվիրումով մշտապես եղել են Լոռու և լոռեցիների կողքին: Թումանյանագետների ընտրությունը ևս վկայում է հեղինակի բանասիրական պրպտումների, թումանյանագիտության ոլորտին քաջատեղյակության մասին:

Եթե հանրագիտարաններում սովորաբար տեղ է գտնում գործիչների հիմնականում մասնագիտական գործունեությունը, ապա այստեղ՝ շնորհիվ յուրաքանչյուր գործչի միջավայրի, ընտանիքի, մտերիմ-հարազատների հետ ներկայացման, նրանց մասին այլոց գնահատականների և նույնիսկ ընտանեկան լուսանկարների՝ կազմվում է առավել սպառիչ պատկերացում: Անձերը հանդես են գալիս ամբողջական նկարագրով՝ թե՛ իբրև մշակույթի սպասավոր և թե՛ իբրև մարդ: Վավերական վիթխարի նյութը ներկայացվում է փաստարկված, գեղեցիկ, պատկերավոր, արտահայտիչ մայրենիով, գիտական պարզ ու մատչելի լեզվով:

Գրքի արժեքը և արդիականության դրսևորումը ոչ միայն փաստավավերագրական ու տեղեկատվական հարուստ նյութի, Լոռու տարածաշրջանի բնաշխարհագրական միջավայրի, այլև ազգային գիտամշակութային մթնոլորտի ներկայացման մեջ է:

Մեծ է գրքի իմացաբանական – ճանաչողական նշանակությունը: Հեղինակը հայոց պատմության քարեղեն վկաների, հուշարձանների և հիմնականում Լոռուց սերված նշանավոր դեմքերի գրավիչ ցուցադրմամբ հանդես է գալիս որպես հայ մշակույթի հմուտ պատմաբան, բնապաշտ, ազգագրագետ, արվեստաբան, բանասեր: Նշենք նաև, որ հարազատ բնաշխարհը, այնտեղ գործող զանազան հաստատություններ, ճարտարապետական հուշարձանները ներկայացնելիս հեղինակը հիմնականում հենվում է սեփական դիտարկումների վրա: Հատորում հառնում է ոչ միայն տաղանդավոր, շնորհալի լոռեցիների, Լոռուց և նրա հարակից շրջաններից որևէ ճյուղով սերված մշակույթի գործիչների, այլ հենց երկրի՝ հիմնականում Լոռու կերպարը՝ իր առանձնահատկություններով, գեղեցկություններով, պատմությամբ և հոգևոր ողջ հարստությամբ: Եվ այս ամենը ներկայացվում է ոչ միայն գիտական, այլև՝ արվեստի այնպիսի ուժով, որը ընթերցանության գեղագիտական հաճույք է պատճառում:

Գիտարանում հայկական ազգային ոգին ձուլվում է Լոռու և հարակից շրջանների մշակույթի առանձնահատկություններին:

Կարելի է նշել, որ բոլոր մենագրություններն աչքի են ընկնում տպագրական բարձր որակով, ասելիքը ներկայացնող արժեքավոր լուսանկարներով, պատկերազարդմամբ, ինչը հազվադեպ երևույթ է գիտական հրատարակությունների համար. այստեղ զգացվում է ճարտարապետ – հեղինակի ճաշակը և բարձրորակ տպագրության հարցում թումանյանական պահանջկոտությունը: Այս աշխատությունը ևս բացառություն չէ: Նա իր ժողովածուն հարստացրել ու գեղեցկացրել է Լոռու գեղեցիկ բնապատկերների, հուշարձանների, նկարիչ լոռեցիների կտավների լուսանկարներով: 704 բառահոդվածներն ուղեկցվում են շուրջ 3000 գունավոր ու սև-սպիտակ լուսանկարներով: Դրանք ներկայացնող հեղինակի երբեմն նաև հումորային բնորոշումների, խոսուն, դիպուկ արտահայտությունների մեջ զգացվում է հայրենասեր հայի, հմուտ հայրենագետի, հայ ճարտարապետության ու մշակույթի անխոնջ գործչի սերը հայրենիքի, բնաշխարհի և այնտեղ ապրող կամ այնտեղից սերված հայ մարդու հանդեպ:

Լուսանկարներով հարուստ են, հատկապես, կերպարվեստի, գրաֆիկայի և թատրոնի, նաև գեղանկարիչների մասին բառահոդվածները: Ընթերցողին գրավում են նկարիչներ Անատոլի Ավետյանի (էջ 107), Վիլեն Գաբազյանի (էջ 163), Գուրգեն Լոռեցու (էջ 191), Ալբերտ Իսոյանի (էջ 333), Արտավազդ Թումանյանի (էջ 320), Հրանտ Թադևոսյանի (էջ 270, 272), Գեորգի Թովմասյանի (էջ 286), Սամ-

վել Խառատյանի (էջ 368, 369), Վարուժան Վարդանյանի (էջ 786), Խաչատուր Ղարաբեկյանի (էջ 465), Վազգեն Բաղալյանի, Սարգիս Ղարիբյանի, Արամ Մարգարյանի (էջ 474, 508), Ալբերտ Պապոյանի (էջ 651) կտավների, մատիտանկարների, քանդակների, գրաֆիկական ստեղծագործությունների պատկերասրահը: Ընթերցողը ոչ միայն կարդում, այլև տեսնում է Լոռին, Ահնիձորը, Այգեհատը, Գտեվանքը, Դեբեդը, Գուգարքը, Հնեվանքը, Հաղպատի, Հոռոմայրի, Քոբայրի, Սեղվու վանքերը, Ճոճկանը, Մարգահովիտը, Շնողը, Ոսկեպարը, Ալավերդին, Սպիտակը, Ստեփանավանը, Վանաձորը, Դսեղը, Օձունն իրենց բնությամբ ու մշակութային հաստատություններով:

Տարածքային հանրագիտարաններն ընդգծում են հայ մշակույթի բազմերանգության կոնկրետ գույները, յուրահատկությունները, գալիս են ամբողջացնելու այն ընդհանուրը, որ բնորոշ է հայ մշակույթին և այն առանձնահատուկն ու միաժամանակ բազմերանգությունը, որով ներկայանում է հայը համամարդկային մշակույթի պատմության մեջ: Այս իմաստով Գ. Շախկյանը իր մեծ հայրենակցի՝ անվանի դաշնակցական և ՀՅԴ խիղճը բնորոշող ազնվագույն հայ Սիմոն Զավարյանի արժանի ժառանգորդն է, ով թե՛ տարածքային, և թե՛ համահայկական ալբոմ-գիտարանի առաջին նախաձեռնողն էր: Ս. Զավարյանի «Հայը և Հայաստանը» կամ «Հայի Աշխատանքը» խորագրով ալբոմ-հանրագիտարանը՝ նվիրված էր Հայաստանի տարբեր տարածքների, մասնավորապես Սասունի, Կիլիկիայի, Տարոնի, «մեղվաբուծական» Լոռու և այլ վայրերի հայության կյանքին ու մշակույթին: Նա նույնպես միայնակ էր կատարում հայրենագիտական այդ լուրջ հետազոտությունը, սակայն այդ ձեռնարկին մասնակից էր դարձրել իր մեծ հայրենակցին՝ Հովհաննես Թումանյանին: Հենց բանաստեղծն էր Զավարյանին տրամադրել Լոռու մասին բազմաբնույթ նյութեր, լուսանկարներ, որոնք վերաբերում էին պատմական հուշարձաններին, ավերակներին, խաչքարերին, լոռեցիների կյանքին ու կենցաղին: Եթե Զավարյանը մտադիր էր իր գիտարանը և նրա հրատարակության հասույթը նվիրել «կարմրապսակ Սասունին», ապա Շախկյանն այն նվիրել է ամենամեծ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին:

Այսպես, ստեղծվել է մի բացառիկ ուշագրավ պատկերազարդ հանրագիտարան կամ ալբոմ-գիտարան, որը մեզանում չունի իր նախօրինակը: Այն հրատարակչական բարձրորակ տպագրությամբ («Տիգրան Մեծ» հրատարակչություն) կարող է մրցել նույնաբնույթ աշխատանքների ցանկացած հրատարակության հետ: Գ. Շախկյանի «Թումանյանական աշխարհ. մշակութային գիտարանը» արժեքավոր ներդրում է հայոց հանրագիտարանային ուսումնասիրությունների ոլորտում:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ